ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/79

ք. Երևան «23» 07 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Սարկողի» ՍՊԸ -ն**, ի դեմս տնօրեն **Ռազմիկ Սարգսյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսվածծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ Վայոց Ձորի մարզի Վերնաշեն և Գլաձոր բնակավայրերի խմելու ջրի ներքին ցանցերի առանձին հատվածների վերանորոգում»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 140 օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինի սգործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետովնախատեսվածտույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպեսնաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին (հավելված 5) և ծավալաթերթին (հավելված 1) համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համարվ ճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակիաշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանցլրացուցի չվճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը **կազմում է 15,924,000 (տասնհինգ միլիոն ինը հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ, որից 2,654,000 (երկու միլիոն վեց հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:**

5.1.1 Պայմանագրի գնից՝ **մինչև 3,981,000 (երեք միլիոն ինը հարյուր ութսունմեկ հազար) ՀՀ դրամը**, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[1]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկՊ ատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է

---

[1] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը
:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը

Խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպեսնաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը ևտուգանքը հաշվարկվումև հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերիև (կամ) տուգանքների վճարումը կողմերինչի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[2] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային

կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվումեն բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 7 **էջից**, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1, N 5, N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբկիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	<< Սարկողի >> ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 24
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 08906696
Հ/Հ՝ 900018001231	Հ/Հ՝ 24113000042500
Կենտրոնական գանձապետարան	<< Յունիբանկ >> ԲԲԸ
Գործադիր տնօրեն	<< Եղեգնաձոր >> մասնաճյուղ
Աշոտ Կիրակոսյան	Տնօրեն Ռազմիկ Սարգսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«23» «07» 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/79 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *
«ՀՀ Վայոց Ձորի մարզի Վերնաշեն և Գլաձոր բնակավայրերի խմելու ջրի ներքին ցանցերի առանձին հատվածների վերանորոգում»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

h/h		Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի ընդ.արժ հազ.դրամ	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
1		*Վերնաշեն բնակավայրի պայմանական N1 փողոցի խմելու ջրի վերակառուցում: Հողային աշխատանքներ*				
1	1	Խրամուղու մշակում էքսկավատորով III կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,073	336,8	24,70
2	2	Խրամուղու մշակում էքսկավատորով IV կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,135	465,9	63,07
3	3	Խրամուղու մշակում էքսկավատորով V կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,0933	582,4	54,35
4	4	V կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	27,0	5,9	158,37
5	5	Փափուկ գրունտի բարձում էքսկավատորով հետլիցքի համար	1000մ^3	0,0888	452,4	40,17
6	6	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 1կմ հեռ. վրա	տ	159,9	0,9	138,26
7	7	Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	28,67	1,1	32,51
8	8	Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	60,16	1,1	68,22
9	9	Խրամուղու ետլիցք բուլդոզերով, տեղական գրունտով, աստիճանական տոփանումով	1000 մ^3	0,237	221,6	52,56
10	10	Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	1000մ^3	0,065	50,7	3,30
11	11	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=90x10մմ 16մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	470,0	3,5	1666,95
12	12	Ե/բ հավաքովի խողովակի տեղադրում D=1200մմ	գմ	1,2	86,5	103,80
13	13	Սեպավոր փականի մոնտաժում 90մմ	հատ	1,0	70,5	70,53
14	14	Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում,	հատ	37,0	0,9	35,14
15	15	Անցում մետաղից պոլիէթիլեն D=108x90մմ	հատ	3,0	20,3	60,84
16	16	Անցում պոլիէթիլենե ձգվող 90x90x110մմ	հատ	2,0	16,4	32,72
17	17	Խամուտ-անցում 90x1/2, 1.6 ՄՊա	հատ	32,0	2,5	78,83
18	18	Մետաղական խողովակի տեղադրում D=108x5մմ մոնտաժում և փորձարկում	գմ	6,0	7,6	45,53
19	19	Խողովակների հակակոռոզիոն քսվածք բիտումե մածիկով	մ^2	2,034	1,3	2,68
20	20	Խողովակաշարի ախտահանում	գմ	471,2	0,1	30,61
21	21	Խողովակաշարի միացում ջրատարին	տեղ	32,0	0,2	7,79
22	22	Խճի նախապատրաստական շերտ	մ^3	0,63	9,5	5,97
23	23	Տարածքի ասֆալտապատում խոշորահատիկ 6սմ	մ^2	6,30	23,7	149,29
24	24	Տարածքի ասֆալտապատում մանրահատիկ 4սմ	մ^2	6,30	22,5	141,97

25	25	PP կոմբինացված կցամաս(20x1/2M)	հատ	32,00	0,4	12,88
26	26	PP կոմբինացված կցամաս(20x1/2F)	հատ	32,00	0,4	12,88
2		*Վերնաշեն բնակավայրի պայմանական N2 փողոցի խմելու ջրի վերակառուցում:*				
1	1	Խրամուղու մշակում էքսկավատորով III կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,112	336,8	37,58
2	2	Խրամուղու մշակում էքսկավատորով IV կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,062	465,9	28,70
3	3	Խրամուղու մշակում էքսկավատորով V կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,1017	582,4	59,24
4	4	V կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	8,0	5,9	46,92
5	5	VI կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	55,2	6,5	356,15
6	6	Փափուկ գրունտի բարձում էքսկավատորով հետլիցքի համար	1000մ^3	0,0903	452,4	40,85
7	7	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 1կմ հեռ. վրա	տ	162,6	0,9	140,60
8	8	Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	29,50	1,1	33,45
9	9	Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	60,82	1,1	68,97
10	10	Խրամուղու ետլիցք բուլդոզերով, տեղական գրուտով, աստիճանական տոփանումով	1000մ^3	0,248	221,6	54,91
11	11	Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	1000մ^3	0,068	50,7	3,43
12	12	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=63x5.8մմ 16մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	350,0	1,9	676,67
13	13	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=50x4,6մմ 16մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	133,0	1,2	165,61
14	14	Ե/բ հավաքովի խողովակի տեղադրում D=1200մմ	գմ	1,2	86,5	103,80
15	15	Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում,	հատ	36,0	0,9	34,19
16	16	Անցում պոլիէթիլեն. գոդվող D=90x63մմ	հատ	1,0	1,7	1,68
17	17	Անցում պոլիէթիլենային գոդվող 63x50մմ	հատ	1,0	1,1	1,08
18	18	Եռաբաշխիկ պոլիէթիլենային ծգվող 50x50x50մմ	հատ	1,0	4,3	4,33
19	19	Խամուտ-անցում 63x1/2, 1.6 ՄՊա	հատ	22,0	1,8	39,90
20	20	Խամուտ-անցում 50x1/2, 1.6 ՄՊա	հատ	10,0	1,6	15,54
21	21	Խցան 50մմ	հատ	1,0	3,7	3,65
22	22	Սեպավոր փականի մոնտաժում 63մմ	հատ	1,0	57,2	57,22
23	23	Սեպավոր փականի մոնտաժում 50մմ	հատ	1,0	45,1	45,05
24	24	Խողովակաշարի ախտահանում	գմ	484,2	0,1	31,46
25	25	Խողովակաշարի միացում ջրատարին	տեղ	32,0	0,2	7,79
26	26	PP կոմբինացված կցամաս(20x1/2M)	հատ	32,0	0,4	12,88
27	27	PP կոմբինացված կցամաս(20x1/2F)	հատ	32,0	0,4	12,88
3		*Վերնաշեն բնակավայրի պայմանական N3 փողոցի խմելու ջրի վերակառուցում*				
1		Խրամուղու մշակում էքսկավատորով III կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,04588	336,8	15,45
2		Խրամուղու մշակում էքսկավատորով IV կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,0207	465,9	9,66
3		Խրամուղու մշակում էքսկավատորով V կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,0344	582,4	20,05
4		V կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	35,0	5,9	205,29
5		VI կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	18,3	6,5	118,07
6		Փափուկ գրունտի բարձում էքսկավատորով հետլիցքի համար	1000մ^3	0,0420	452,4	19,00
7		Բարձած գրունտի տեղափոխում մինչև 1կմ հեռ. վրա	տ	75,5	0,9	65,28
8		Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	13,54	1,1	15,35

9		Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	28,41	1,1	32,22
10		Խրամուղու ետլիցք բուլդոզերով, տեղական գրունտով, աստիճանական տոփանումով	1000մ^3	0,113	221,6	25,14
11		Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	1000 մ^3	0,031	50,7	1,58
12		Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=50x4.6մմ 16մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գծմ	222,0	1,2	276,43
13		Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում,	հատ	11,0	0,9	10,45
14		Խամուտ-անցում 50x1/2, 1.6 ՄՊա	հատ	9,0	1,6	13,99
15		Անցում մետաղից պոլիէթիլեն D=63x50մմ	հատ	1,0	2,2	2,22
16		Խցան 50մմ	հատ	1,0	3,7	3,65
17		Մետաղական խողովակի տեղադրում D=63մմ մոնտաժում և փորձարկում	գծմ	1,0	3,9	3,94
18		Խողովակների հակակոռոզիոն քսվածք բիտումե մածիկով	մ^2	0,20	1,3	0,26
19		Խողովակաշարի ախտահանում	գծմ	223,0	0,1	14,49
20		Խողովակաշարի միացում ջրատարին	տեղ	9,0	0,2	2,19
21		PP կոմբինացված կցամաս(20x1/2M)	հատ	9,0	0,4	3,62
22		PP կոմբինացված կցամաս(20x1/2F)	հատ	9,0	0,4	3,62
4		*Վերնաշեն բնակավայրի պայմանական N4 փողոցի խմելու ջրի վերակառուցում*				
1	1	Խրամուղու մշակում էքսկավատորով III կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,07847	336,8	26,43
2	2	Խրամուղու մշակում էքսկավատորով IV կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,0372	465,9	17,35
3	3	Խրամուղու մշակում էքսկավատորով V կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,1285	582,4	74,81
4	4	V կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	45,0	5,9	263,95
5	5	VI կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	62,9	6,5	406,03
6	6	Փափուկ գրունտի բարձում էքսկավատորով հետլիցքի համար	1000 մ^3	0,0941	452,4	42,57
7	7	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 1կմ հեռ. վրա	տ	169,3	0,9	146,39
8	8	Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	30,68	1,1	34,79
9	9	Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	63,38	1,1	71,87
10	10	Խրամուղու ետլիցք բուլդոզերով, տեղական գրունտով, աստիճանական տոփանումով	1000մ^3	0,258	221,6	57,18
11	11	Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	1000մ^3	0,070	50,7	3,57
12	12	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=63x5.8մմ 16մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	150,0	1,9	290,00
13	13	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=50x3.0մմ 10մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	353,0	1,0	337,89
14	14	Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում,	հատ	15,0	0,9	14,25
15	15	Անցում մետաղից պոլիէթիլեն D=108x63մմ	հատ	1,0	20,3	20,28
16	16	Անցում պոլիէթիլենային զոդվող 63x50մմ	հատ	1,0	1,1	1,08
17	17	Խամուտ-անցում 63x1/2, 1.6 ՄՊա	հատ	5,0	1,8	9,07
18	18	Խամուտ-անցում 50x1/2, 1.0 ՄՊա	հատ	7,0	1,6	10,88
19	19	Խցան 50մմ	հատ	1,0	3,7	3,65
20	20	Սեպավոր փականի մոնտաժում 110մմ	հատ	1,0	84,1	84,05
21	21	Խողովակաշարի ախտահանում	գմ	503,0	0,1	32,68
22	22	Խողովակաշարի միացում ջրատարին	տեղ	12,0	0,2	2,92
23	23	PP կոմբինացված կցամաս(20x1/2M)	հատ	12,0	0,4	4,83
24	24	PP կոմբինացված կցամաս(20x1/2F)	հատ	12,0	0,4	4,83
5		*Վերնաշեն բնակավայրի պայմանական N5, 6 փողոցի խմելու ջրի վերակառուցում*				

1	1	Խրամուղու մշակում էքսկավատորով III կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,02670	336,8	8,99
2	2	Խրամուղու մշակում էքսկավատորով IV կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,0743	465,9	34,60
3	3	Խրամուղու մշակում էքսկավատորով V կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,1007	582,4	58,64
4	4	V կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	30,0	5,9	175,97
5	5	Փափուկ գրունտի բարձում էքսկավատորով հետլիցքի համար	1000 մ^3	0,0624	452,4	28,23
6	6	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 1կմ հեռ. վրա	տ	112,3	0,9	97,12
7	7	Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	20,13	1,1	22,83
8	8	Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	42,24	1,1	47,90
9	9	Խրամուղու ետլիցք բուլդոզերով, տեղական գրուտով, աստիճանական տոփանումով	1000մ^3	0,169	221,6	37,37
10	10	Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	1000մ^3	0,046	50,7	2,34
11	11	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=50x3.0մմ 10մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	230,0	1,0	220,16
12	12	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=25մմ 10մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	100,0	0,5	45,02
13	13	Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում,	հատ	5,0	0,9	4,75
14	14	Խամուտ-անցում 50x1/2, 1.0 ՄՊա	հատ	2,0	1,6	3,11
15	15	Անցում մետաղից պոլիէթիլեն D=63x50մմ	հատ	1,0	2,2	2,22
16	16	Խցան 50մմ	հատ	1,0	3,7	3,65
17	17	Անցում պոլիէթիլենային զոդվող 20x50մմ	հատ	1,0	0,5	0,54
18	18	Մետաղական խողովակի տեղադրում D=63մմ մոնտաժում և փորձարկում	գմ	1,0	3,9	3,94
19	19	Խողովակների հակակոռոզիոն քսվածք բիտումե մաստիկով	մ^2	0,20	1,3	0,26
20	20	Խողովակաշարի ախտահանում	գմ	331,0	0,1	21,50
21	21	Խողովակաշարի միացում ջրատարին	տեղ	4,0	0,2	0,97
22	22	PP կոմբինացված կցամաս(20x1/2M)	հատ	4,0	0,4	1,61
23	23	PP կոմբինացված կցամաս(20x1/2F)	հատ	4,0	0,4	1,61
6		*Վերնաշեն բնակավայրի պայմանական N7 փողոցի խմելու ջրի վերակառուցում*				
1	1	Խրամուղու մշակում էքսկավատորով III կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,05928	336,8	19,97
2	2	Խրամուղու մշակում էքսկավատորով IV կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,1094	465,9	50,99
3	3	Խրամուղու մշակում էքսկավատորով V կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,072	582,4	42,10
4	4	V կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	25,000	5,9	146,64
5	5	Փափուկ գրունտի բարձում էքսկավատորով հետլիցքի համար	1000մ^3	0,0718	452,4	32,48
6	6	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 1կմ հեռ. վրա	տ	129,2	0,9	111,75
7	7	Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	23,180	1,1	26,29
8	8	Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	48,640	1,1	55,16
9	9	Խրամուղու ետլիցք բուլդոզերով, տեղական գրուտով, աստիճանական տոփանումով	1000մ^3	0,194	221,6	43,03
10	10	Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	1000մ^3	0,053	50,7	2,70
11	11	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=63x3.8մմ 10մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	150,0	1,4	210,30
12	12	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=50x3.0մմ 10մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	230,0	1,0	220,16
13	13	Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում,	հատ	26,0	0,9	24,69

14	14	Անցում մետաղից պոլիէթիլեն D=108x63մմ	հատ	1,0	20,3	20,28
15	15	Անցում պոլիէթիլենային զոդվող 63x50մմ	հատ	1,0	1,1	1,08
16	16	Խամուտ-անցում 63x1/2, 1.0 ՄՊա	հատ	10,0	1,8	18,14
17	17	Խամուտ-անցում 50x1/2, 1.0 ՄՊա	հատ	13,0	1,6	20,21
18	18	Խցան 50մմ	հատ	1,0	3,7	3,65
19	19	Խողովակաշարի ախտահանում	գմ	380,0	0,1	24,69
20	20	Խողովակաշարի միացում ջրատարին	տեղ	23,0	0,2	5,60
21	21	PP կոմբինացված կցամաս(20x1/2M)	հատ	23,0	0,4	9,25
22	22	PP կոմբինացված կցամաս(20x1/2F)	հատ	23,0	0,4	9,25
7		*Վերնաշեն բնակավայրի պայմանական N8 փողոցի խմելու ջրի վերակառուցում*				
1	1	Խրամուղու մշակում էքսկավատորով III կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,07533	336,8	25,37
2	2	Խրամուղու մշակում էքսկավատորով IV կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,0701	465,9	32,65
3	3	Խրամուղու մշակում էքսկավատորով V կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,0710	582,4	41,32
4	4	V կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	71,000	5,9	416,45
5	5	VI կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	13,64	6,5	88,01
6	6	Փափուկ գրունտի բարձում էքսկավատորով հետլիցքի համար	1000մ^3	0,0813	452,4	36,78
7	7	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 1կմ հեռ. վրա	տ	146,3	0,9	126,54
8	8	Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	26,230	1,1	29,75
9	9	Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	55,040	1,1	62,42
10	10	Խրամուղու ետլիցք բուլդոզերով, տեղական գրունտով, աստիճանական տոփանումով	1000մ^3	0,220	221,6	48,69
11	11	Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	1000մ^3	0,060	50,7	3,04
12	12	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=63x3.8մմ 10մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	150,0	1,4	210,30
13	13	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=50x3.0մմ 10մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	280,0	1,0	268,02
14	14	Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում,	հատ	16,0	0,9	15,20
15	15	Անցում մետաղից պոլիէթիլեն D=108x63մմ	հատ	1,0	20,3	20,28
16	16	Անցում մետաղից պոլիէթիլեն D=108x50մմ	հատ	1,0	18,3	18,25
17	17	Անցում պոլիէթիլենային զոդվող 63x50մմ	հատ	1,0	1,1	1,08
18	18	Խամուտ-անցում 63x1/2, 1.0 ՄՊա	հատ	6,0	1,8	10,88
19	19	Խամուտ-անցում 50x1/2, 1.0 ՄՊա	հատ	7,0	1,6	10,88
20	20	Խողովակաշարի ախտահանում	գմ	430,0	0,1	27,94
21	21	Խողովակաշարի միացում ջրատարին	տեղ	13,0	0,2	3,16
22	22	PP կոմբինացված կցամաս(20x1/2M)	հատ	13,0	0,4	5,23
23	23	PP կոմբինացված կցամաս(20x1/2F)	հատ	13,0	0,4	5,23
24	24	Խճի նախապատրաստական շերտ	մ^3	0,63	9,5	5,97
25	25	Տարածքի ասֆալտապատում խոշորահատիկ 6սմ	մ^2	6,30	23,7	149,31
26	26	Տարածքի ասֆալտապատում մանրահատիկ 4սմ	մ^2	6,30	22,5	141,99
8		*Վերնաշեն բնակավայրի պայմանական N9 փողոցի խմելու ջրի վերակառուցում*				
1		Խրամուղու մշակում էքսկավատորով III կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,02964	336,8	9,98
2		Խրամուղու մշակում էքսկավատորով IV կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000 մ^3	0,0416	465,9	19,39
3		Խրամուղու մշակում էքսկավատորով V կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,0568	582,4	33,05
4		V կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	5,0	5,9	29,33
5		Փափուկ գրունտի բարձում էքսկավատորով հետլիցքի համար	1000մ^3	0,0359	452,4	16,24

6		Բարձած գրունտի տեղափոխում մինչև 1կմ հեռ. վրա	տ	64,6	0,9	55,88
7		Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	11,60	1,1	13,15
8		Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	24,32	1,1	27,58
9		Խրամուղու ետլիցք բուլդոզերով, տեղական գրունտով, աստիճանական տոփանումով	1000մ^3	0,097	221,6	21,51
10		Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	1000մ^3	0,0266	50,7	1,35
11		Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=50x3.0մմ 10մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	140,0	1,0	134,01
12		Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=25մմ 10մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	50,0	0,5	22,51
13		Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում,	հատ	9,0	0,9	8,55
14		Անցում մետաղից պոլիէթիլեն D=108x50մմ	հատ	1,0	18,3	18,25
15		Խամուտ-անցում 50x1/2, 1.0 ՄՊա	հատ	7,0	1,6	10,88
16		Խցան 50մմ	հատ	1,0	3,7	3,65
17		Խողովակաշարի ախտահանում	գմ	190,0	0,1	12,34
18		Խողովակաշարի միացում ջրատարին	տեղ	8,0	0,2	1,95
19		PP կոմբինացված կցամաս(20x1/2M)	հատ	8,0	0,4	3,22
20		PP կոմբինացված կցամաս(20x1/2F)	հատ	8,0	0,4	3,22
21		ԽՃի նախապատրաստական շերտ	մ^3	0,63	9,5	5,97
22		Տարածքի ասֆալտապատում խոշորահատիկ 6սմ	մ^2	6,30	23,7	149,31
23		Տարածքի ասֆալտապատում մանրահատիկ 4սմ	մ^2	6,30	22,5	141,99
9		*Գլածոր բնակավայրի պայմանական N1 փողոցի խմելու ջրի վերակառուցում*				
1	1	Խրամուղու մշակում էքսկավատորով II կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,0546	270,5	14,77
2	2	Խրամուղու մշակում էքսկավատորով III կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,0712	336,8	23,97
3	3	Խրամուղու մշակում էքսկավատորով IV կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,2019	465,9	94,07
4	4	Խրամուղու մշակում էքսկավատորով V կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,083	582,4	48,43
5	5	V կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	49,80	5,9	292,10
6	6	Փափուկ գրունտի բարձում էքսկավատորով հետլիցքի համար	1000մ^3	0,1192	452,4	53,92
7	7	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 1կմ հեռ. վրա	տ	214,6	0,9	185,52
8	8	Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	40,130	1,1	45,51
9	9	Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	79,110	1,1	89,71
10	10	Խրամուղու ետլիցք բուլդոզերով, տեղական գրունտով, աստիճանական տոփանումով	1000 մ^3	0,341	221,6	75,65
11	11	Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	1000 մ^3	0,070	50,7	3,55
12	12	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=110x6.6մմ 10մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	538,4	3,5	1899,13
13	13	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=25մմ 10մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	120,0	0,5	54,02
14	14	Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում,	հատ	6,0	0,1	0,36
15	15	Անցում մետաղից պոլիէթիլեն D=108x110մմ	հատ	1,0	20,3	20,28
16	16	Խամուտ-անցում 110x1/2, 1.0 ՄՊա	հատ	5,0	2,9	14,25
17	17	Սեպավոր փականի մոնտաժում 110մմ	հատ	1,0	84,1	84,05
18	18	Խողովակաշարի ախտահանում	գմ	658,4	0,1	42,77
19	19	Խողովակաշարի միացում ջրատարին	տեղ	5,0	0,2	1,22
20	20	PP կոմբինացված կցամաս(20x1/2M)	հատ	5,0	0,4	2,01

21	21	PP կոմբինացված կցամաս(20x1/2F)	հատ	5,0	0,4	2,01
10		*Գլաձոր բնակավայրի պայմանական N2 փողոցի խմելու ջրի վերակառուցում*				
1	1	Խրամուղու մշակում էքսկավատորով III կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,0811	336,8	27,33
2	2	Խրամուղու մշակում էքսկավատորով IV կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,1139	465,9	53,06
3	3	Խրամուղու մշակում էքսկավատորով V կարգի գրունտում, կատարելով կողլիցք	1000մ^3	0,149	582,4	86,78
4	4	V կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	20,00	5,9	117,31
5	5	Փափուկ գրունտի բարձում էքսկավատորով հետլիցքի համար	1000մ^3	0,0953	452,4	43,11
6	6	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 1կմ հեռ. վրա	տ	171,5	0,9	148,33
7	7	Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	31,720	1,1	35,97
8	8	Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտից	մ^3	63,560	1,1	72,08
9	9	Խրամուղու ետլիցք բուլդոզերով, տեղական գրուտով, աստիճանական տոփանումով	1000մ^3	0,269	221,6	59,55
10	10	Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	1000մ^3	0,073	50,7	3,69
11	11	Պոլիէթիլենային, խմելու ջրի համար, D=63x3.8մմ 10մթն. ճնշ. մոնտաժում և փորձարկում	գմ	330,0	1,4	462,66
12	12	Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում,	հատ	42,0	0,9	39,89
13	13	Անցում մետաղից պոլիէթիլեն D=108x90մմ	հատ	1,0	20,3	20,28
14	14	Անցում պոլիէթիլենային զոդվող 63x90մմ	հատ	1,0	1,7	1,68
15	15	Խամուտ-անցում 63x1/2" 1.0 ՄՊա	հատ	28,0	1,8	50,78
16	16	Խամուտ-անցում 90x1/2" 1.0 ՄՊա	հատ	12,0	2,5	29,56
17	17	Խցան 50մմ	հատ	1,0	3,7	3,65
18	18	Խողովակաշարի ախտահանում	գմ	330,0	0,1	21,44
19	19	Խողովակաշարի միացում ջրատարին	տեղ	40,0	0,2	9,73
20	20	PP կոմբինացված կցամաս(20x1/2M)	հատ	40,0	0,4	16,10
21	21	PP կոմբինացված կցամաս(20x1/2F)	հատ	40,0	0,4	16,10

Ընդամենը	16837,94
Շահույթ 11%	1852,17
Ընդամենը	18690,11
ԱԱՀ 20%	3738,02
Ընդհանուրը	22428,138

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վերնաշեն և Գլաձոր բնակավայրեր հասցեում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ 00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Վիրակոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<< Սարկոդի >> ՍՊԸ
Հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 24
ՀՎՀՀ՝ 08906696
Հ/Հ՝ 24113000042500
<< Յունիբանկ >> ԲԲԸ
<< Եղեգնաձոր >> մասնաճյուղ
Տնօրեն Ռազմիկ Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 23 » 07 2019թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/79 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների Կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
3	**«ՀՀ Վայոց Ձորի մարզի Վերնաշեն և Գլաձոր բնակավայրերի խմելու ջրի ներքին ցանցերի առանձին հատվածների վերանորոգում»**	*Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից*	***140 օր տևողությամբ***
ԸՆԴԱՄԵՆԸ		*Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից*	*140 օր տևողությամբ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<< Սարկողի >> ՍՊԸ
Հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 24
ՀՎՀՀ՝ 08906696
Հ/Հ՝ 24113000042500
<< Յունիբանկ >> ԲԲԸ
<< Եղեգնաձոր >> մասնաճյուղ
Տնօրեն Ռազմիկ Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
23 « 03 » 2019թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/79 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	45231131/560	Ջրամատակարարման խողովակաշարերի հետ կապված աշխատանքներ	-	-	-	-	-	-	15,924,000	15,924,000	15,924,000	15,924,000	15,924,000	15,924,000	15,924,000

*** հրավերում գումարները նշվում են գրոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս գրոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<< Սարկողի >> ՍՊԸ

Հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 24

ՀՎՀՀ՝ 08906696

Հ/Հ՝ 24113000042500

<< Յունիբանկ >> ԲԲԸ

<< Եղեգնաձոր >> մասնաճյուղ

Տնօրեն Ռազմիկ Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
23 « 07» 2019 թ. կնքված
ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/79 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ

_____

_____

գտնվելուվայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելուվայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներումՊայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
23 «07» 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/79 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
23 «07» 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/79 ծածկագրով պայմանագրի

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<< Սարկողի >> ՍՊԸ
Հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 24
ՀՎՀՀ՝ 08906696
Հ/Հ՝ 24113000042500
<< Յունիբանկ >> ԲԲԸ
<< Եղեգնաձոր >> մասնաճյուղ

Տնօրեն Ռազմիկ Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 6
«23» «07» » 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/79 *ծածկագրով պայմանագրի*

Պատվիրատու
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Կատարող
<< Սարկողի >> ՍՊԸ
Հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 24
ՀՎՀՀ՝ 08906696
Հ/Հ՝ 24113000042500
<< Յունիբանկ >> ԲԲԸ
<< Եղեգնաձոր >> մասնաճյուղ

ԱԿՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« »2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **«ՀՀ Վայոց Ձորի մարզի Վերնաշեն և Գլաձոր բնակավայրերի խմելու ջրի ներքին ցանցերի առանձին հատվածների վերանորոգում»** աշխատանքներ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019թ.
Պայմանագրի համարը՝ ***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/79***
Սույնով Պատվիրատուն և **ՀՀ Վայոց Ձորի մարզի Վերնաշեն և Գլաձոր** համայնքը, միկողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ ***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/79*** պայմանագրի **3.2.3** կետի պահանջները, կազմեցին սույն **ԱԿՏ-ը** հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, ՀՀ Վայոց Ձորի մարզի Վերնաշեն և Գլաձոր համայնքի հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողն ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրին կից Նախագծով նախատեսված տարածքը:

Տարածքը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Տարածքը ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.